

Համաժողովում չասուած մեր խօսքը

Երեւանի Պետական Համալսարանի լեզուաբան Լեւոն
Եզեկեանի՝ «*Դարձեալ ուղղագրութեան մասին*» վերնագրով ելոյթի առթիւ

Ընդունուած կարգի համաձայն, այս լեզուաբանի ելոյթի առթիւ վերջում կայանալիք լայն քննարկումը տեղի չունեցաւ, որովհետեւ Եզեկեանը իր ելոյթը աւարտելուց հետո անմիջապէս հեռացաւ դահլիճից եւ այլեւս չմասնակցեց համաժողովի միւս (նաեւ յաջորդ օրուայ) նիստերին: Ուստի կարելի է ենթադրել, որ՝ Ա) Համաժողովում մայրենիի երկու լեզուաճիւղերի մերձեցման հարցը իրենց համար ո՛չ միայն անկարելւոր է, այլեւ *վտանգաւոր*, հաւանաբար նկատի առնելով այն, որ, արեւմտահայերէնում շարունակուում է պահպանուել «*Մեսրոպեան հորջորջուող*» ուղղագրութիւնը (*այդ ճնշող արտայայտութիւնը մեր լեզուաբանի շուրթերից հնչեց*), մինչդէռ, ըստ Եզեկեանականների, հայ ժողովուրդը «Մեսրոպեան հորջորջուած» ուղղագրութեան փոխարէն, պարտաւոր է ասել՝ **հայոց լեզուի նախաաբեղեանական եւ հետաբեղեանական ուղղագրութիւններ:**

Բ) իր զեկոյցում, գիտենալով հադերձ, որ իր ներկայացրած թեզերը համաժողովում կողմնակիցներ չունեն, այնուամենայնիւ Եզեկեանը յայտարարում է, որ **բանաւոր լեզուի փոփոխութիւնների հետ պէտք է փոփոխուի նաեւ գրաւորը:** Մինչդէռ լեզուաբանը պէտք է իմանայ, որ բոլոր ժողովուրդների մօտ, ժամանակի ընթացքում բանաւոր խօսքը փոփոխւում է, ինչը բնական երեւոյթ է, բայց աշխարհում ընդհանուր ճանաչում գտած գրաբանական տեսութիւնը չի ընդունում գրաւորի փոփոխութիւնը, պնդելով ընդհակառակը, որ այդ **փոփոխուող բանաւոր խօսքի գրաւորը միշտ եւ ամենուրեք պահպանւում է, որովհետեւ ընդունուած է, որ համակարգուած ուղղագրութիւններին ձեռք տալ չի կարելի. այլապէս յաջորդ սերունդները չէին կարողանայ կարդալ ու հասկանալ նախորդ սերունդների գրաւոր լեզուն:**

Գ) Եզեկեանը պնդում է, որ Աբեղեանը չի հետեւել կոմունիստներին, որ դեռ 1913-ին արդէն զեկուցել է ազգի մտաւորականութեան պահանջին համապատասխան՝ իր ստեղծած «նոր» ուղղագրութեան մասին, որն, ըստ իրեն, ընդունուել է յաջողութեամբ: Նշենք, որ այս հարցում նա թաքցնում է ճշմարտութիւնը՝ խնդիրը ներկայացնելով իբր համազգային պահանջ: Իրականում դա եղել է ծոյլ ուսուցիչների եւ անգրագէտ խմբագիրների կողմից առաջ քաշուած պահանջ, երբեմն մատնացոյց անելով տգէտ գրիչների եւ մատենաները սխալ արտագրողների գործերը: Գաղափար կազմելու համար բերենք այն ժամանակներում հանդէս եկած՝ այդ կարգի մտաւորականների առաջարկները, որոնք երբեք էլ չեն ընդունուել ազգի եւ նրա առաջաւոր մտաւորականութեան կողմից: Օրինակներ՝ արեւմտահայ իրականութիւնից:

Աշխարհագրագէտ Ղ. Ինճիճեանի՝ հրատարակած տարեգրքի համարներում, նաեւ իր

խմբագրած 8 հատորանոց աշխատությունում գրուել է լսուող, բայց չգրուող «Ը» հնչյունը՝ տրիսուր, լրսել, սըրտանց, նըրանց: **Ներ** հոգնակիակերտ ածանցը գրուում է **Է**-ով՝ մարդիկներ, գետեր, անտառներ: **Մը, այ, նե** մասնիկները գրուել են միասնաբար՝ անգամնը, նայիսնե. կամ **ող** դերբայական ածանցը բոլոր դեպքերում գրուել է **օղ**՝ վագող- վագող: Նահապետ Ռուսինեանը առաջարկում է բոլոր բառերում նոյնպես **Ո** **հնչյոթը** փոխարինել **Օ**-ով՝ տող, սօխ, խնձօր, լօղալ, իսկ **Ե-ի** փոխարեն գրել՝ **Է**. գրելու էս, գրեցիր, գրելու է, վագելու էմ:

Արեւելահայ մամուլում, օրինակ Հայկական աշխարհ » թերթը (Խմբ. Ստեփան Ստեփանե), թոյլ էր տալիս կիրառել եւրոպական կէտադրութիւն՝ վերջակէտը մէկ կէտով, միջակէտը՝ երկու կէտով: «Մշակ» թերթում Մ. Նաւասարդեանը նոյնպէս պահանջում է. մաշտոցաստեղծ **Ո** գիրը արտաքսել բոլոր բառակապակցութիւններից, փոխարենը գրելով **Օ**. օրօշ, անօրօշ, առօղջ: «Արօր» թերթում, Ա. Նազարեթեանը առաջարկում է **ւ** գիրը դուրս գցել գրահամակարգից, գրելով միայն **Վ**: Ղազարոս Աղայեանը հակառակն էր առաջարկում՝ **Վ** գիրը փոխարինել **ւ**-ով՝ կու, ծու սու (կով, ծով, սով բառերի փոխարեն). իսկ Լ. Մարկոսեանը առաջարկում էր՝ ամենուրեք գրել **ւ** գիրը, իսկ դրա մեծատառը համարել **Վ** գիրը: Նա նաեւ առաջարկում է **ու**-ի եւ **իւ**-ի փոխարեն նոր տառեր ստեղծել: «Ընկեր» շաբաթաթերթի խմբագիր, մասնագիտութեամբ փիլիսոփայ Սեդրակ Թառայեանը առաջարկում է գրական աշխարհաբարը փոխարինել ռամկականով (այսինքն բարբառով) եւ կոչ էր անում՝ «Գրիր այնպէս, ինչպէս խօսում ես եւ խօսիր այնպէս՝ ինչպէս գրում ես»: Նոյն Թառայեանը առաջարկում է նաեւ մեր այբուբենից կրճատել 8 տառ՝ հետեւեալ հիմքով՝ «միթե՞ հայ մարդու միտքը գրաւոր արտայայտելու համար աւելի հնչյուններ են հարկաւոր, քան թէ ունեն բոլոր եւրոպական ազգերը»: Մէկ նախադասութեամբ աւելացնենք նաեւ, որ բոլոր վերոյիշեալ առաջարկութիւնների մէջ կային նաեւ բառասկզբի **յ**-ն **հ** կարդալու եւ **վ**-գրութեան, **ւ**-գրութեան, **ու**-գրութեան կիրառման հակասական առաջարկներ:

Այժմ վերադառնանք Եզեկեանի զեկոյցում յիշատակուած «հօր» կոռուանին՝ 1913թ. «Յոբելինական կենտրոնական յանձնաժողովին»: Ըստ պատմաբան Լէօյի (նա մասմակից էր), Խորհրդակցութիւնը նախատեսուած օրը չի կայացել եւ լուրջ քննարկման չի արժանացել, քանի որ յանձնաժողովի անդամները աւելի հետաքրքրուած են եղել եկեղեցական-տօնական հանդիսութիւններով, իսկ մաշտոցեան համակարգուած եւ կանոնարկուած ուղղագրութիւնը վերատեսութեան ենթարկելը, որպէս ակադեմիական հարց, համարել են իրենց ուժերից վեր: Յստակ եզրակացութեան եւ վճռական որոշումների չեն յանգում նաեւ Թիֆլիսի՝ Տիգրան Նազարեանի գրական-գեղարուեստական դահլիճում Ստ.. Մալխասեանցի նախագահութեամբ եղած քննարկումները: Եզեկեանը չի հրապարակում այն տեղեկութիւնը, որ Արեղեանը 1913թ. «յոբելինական» զեկուցման մէջ նշել է ուղղագրութեան փոփոխութեան իրական պատճառի մասին՝ յայտարարելով, որ տարածուած ռուսախօսութիւնը եւ մեծաքանակ անգրագէտ հայախօս սերունդի ձուլման փաստը մեծ վտանգ է ազգի համար, ուստի պահանջում է հայերէնի գրագիտութեան մակարդակը իջեցնել, հասցնել ռուսախօս անգրագէտների դիրամատչելիութեանը: «Մշակ»ի էջերում այդ օրերին Շիրվանզադէն գրում է. «Աւելի գեղեզիկ, աւելի քաղաքակրթական ուղղագրութիւն, քան այն, ինչ տուել է մեզ հին գրականութիւնը, չի կարող տալ այժմեան եւ ոչ մի ժողով...Տգեղ բան կը լինի Սահակի եւ

Մեսրոպի տօնը կատարելու համար ժողովուել եւ նոյն Սահակի եւ Մեսրոպի շինած սքանչելի տաճարը քանդել»։ Հովհաննէս Թումանեանը նկատել է տալիս, որ ուղղագրութիւնը գիտութիւն է եւ նրա դէմ կարելի է դուրս գալ կամ նրան փոխել միայն գիտութիւնով..., միշտ յիշելով, որ միօրինակութիւնը եւ միակերպութիւնը պարտադիր պայման են մեր երկու գրական լեզուների համար»։ Նիկողայոս Մառը 1913 թ. յանձնաժողովի կողից իրեն ուղղուած հարցաթերթիկների առթիւ բացասական դիրքորոշում է ընդունում՝ Արեղեանի առաջարկութիւնների նկատմամբ՝ ասելով «...կը քանդուի կը գնայ աւանդական ուղղագրութիւնը... իսկ եթէ հաշուի առնուի այդ ուղղագրութեան յաջող կիրառումն ու զարգացումը նաեւ արեւելահայ գրական լեզուին, ապա թողնելու է նոյնութեամբ, ոչ մի փոփոխութիւն պէտք չէ կատարել»։ Մառը միաժամանակ առաջարկում է միասնական ու միակերպ ուղղագրութիւնը կիրառելիս արուած փոփոխութիւնները կրկին ետ փոխարինել նախկիններով։

Քանի որ Եզեկեանի զեկուցման թեման ուղղագրութեան մասին էր, լաւ կը լինէր որ զեկուցողը իր ելոյթը կառուցէր՝ *եւնելով 1913թ. նոյն յանձնաժողովում* զեկուցող Մ.

Արեղեանի հետեւեալ տեսական բնոյթի յայտարարութիւններից (որոնցից հետագայ հրաժարումները «բացատրենք» կոմունիստների ճնշմամբ), դրանցից նշեմ երեքը՝.

1.«Ընդհանուր ընդունուած է բոլոր ազգերից, որ ամէն գրական լեզուի համար *միակերպ քերականութեան* հետ *անհրաժեշտ է միակերպ ուղղագրութիւնը...*»։ Մինչդեռ Եզեկեանը ցանկանում է պահել երկրորդ (արեղեանասեւակեան) ուղղագրութիւնը եւս։

2.Արեղեանի նոյն զեկուցումից մի այլ հատուած. «...Բառերի պատկերները (այսինքն գիրը-Ն.Ո.) դարձեւ դար էլ չպիտի մեծ փոփոխութիւնների ենթակայ լինին, որպէս զի *յաջորդ սերունդները չկտրուեն նախորդների հետ՝ գրի միջոցով* մտաւոր հաղորդակցութիւն ոանենալուց»։ Այս լոյսի տակ կրկին կարդացէք իր զեկուցման մէջ՝ **առաջին էջի Բ) կէտում** գրուած՝ Եզեկեանի այն պնդումը, թէ՝ բանաւոր խօսքի հետ պէտք է փոխուի նաեւ գրաւորը։

3.Եւ վերջացնենք մեր յօդուածը Արեղեանի 1913 թ. զեկուցման մէջ նշուած հետեւեալ մտքով. « Եթէ չլինի ուրեմն *ուղղագրութեան այս ընդհանուր եւ տեւական միութիւնը, չի կարող գոյութիւն ունենալ եւ մի ընդհանուր գրական լեզու։ Հայերէնի համար աւելի մեծ է այս պայմանի նշանակութիւնը, քանի որ մենք ունենք այսօր երկու գրական լեզուներ, որոնք նոյնանում են գոնէ միակերպ ուղղագրութեամբ...*»։ Եւ ապա՝ «եթէ որեւէ փոփոխութիւն մեր ուղղագրութեան մէջ աւելի խառն գրութիւն մտցնի եւ մեր գրական լեզուները իրարուց աւելի հեռացնի, աւելի լաւ է, որ չլինի։ Այս պատճառով այս խնդրին պէտք է շատ մեծ զգուշութեամբ մօտենալ»։ Իսկ պարոն Եզեկեանը պատրաստ է մեր ուղղագրութեան մէջ աւելի խառն գրութիւն մտցնելուն եւ, հետեւաբար, մեր գրական լեզուները հնարաւորինս աւելի հեռացնելուն։ Մինչդեռ, մենք այսօր խօսում ենք մերձեցումների հիմնախնդրի մասին։

Հ.Գ----- Ուղղագրական շեղումների եւ դրանց հեղինակների մասին տուեալները վերցրել եմ Մատենադարանի նախկին գիտ աշխատող, դոկտ. փրոֆ. Լեւոն Խաչերեանի (այժմ յանգուցեալ) Լոս-Անջելեսում հրատարակուած հայոց ուղղագրութեան պատմութեան աշխատութիւնից։

25 օգոստոս 2015

ՆՇԱՆ ՈՐԲԵՐԵԱՆ